Համայնավար վարչաձեւը առաջին մէկ օրէն կատարեց կեանքի ազատութիւնը, կաշկանդեց անհատի տնտեսական վերելքի եւ զարգացումի յառաջդիմութիւնը եւ նոյնիսկ սահմանափակեց աշխատութեան իրատեքը: Ձեռք գիտել, թէ ինչպիսի գիտական սահմանում լաւագոյն կը բնութագրէ «ստրկութիւն» բառը, քայքայ գիտել որ վերոգրեալ արտայայտութիւնը, ստրկութիւնը կ'իջեցնէ յանգուցի մակարդակին: Լեւոն Տէր-Պետրոսեան պետական պատասխանատու անձնաւորութիւն մըն է, հաստատուելու շուրջը գաղափարներով, չ'ակնարկելու արկութեան մասին, այլ կը խօսի «ազատութեան գիտակցութեան հասած» ըլլալու հանգուցումին մասին: Ինչու՞ այս անհանձնողը հանդէպ պատմականի առաջնորդի մը, որուն ժողովրդակականութիւնը Հայաստանի մէջ անհախընքաց է, իսկ Սովետական Միութեան մէջ կ'արժանանայ քաջափիլ ու շարժարկեան եւ յարգանքի: Որո՞ւն շարժարկեան շուրջ կրնան քերել պատշաճութեան, չափ ու կշիռ պարպուած աչքովնակ ուրակումներ: «Անգիտակ», «անպատասխանատու» «անքնախար»։ Ի՞նչ քան մտածել կուտայ յարգելի պատմաբանին, որ «Լեւոն Տէր-Պետրոսեան կը կործէ թէ հայ եւ ռուս քաղաքակրթութիւնը գոյութիւն չէ ունեցած եւ առաջել է»:

Թեւ յօդուածագիրը կ'ակնկալուի լրջութիւն ցուցաբերել իր ելույթներուն մէջ, իսկ պատմաբան ըլլալու յատկանշներն ունեցողներէն անի: Լեւոն Տէր-Պետրոսեան չի ծխտել եւ չէ ծխտած հայ եւ ռուս քաղաքակրթութիւնը (անիւն) մենք ենք իրենց քաղաքակրթ, ոչ թէ հակառակը): Բայց լաւապէս կ'ըմբռնէ, որ Կեդրոնական կառավարութիւնը կը մեկնի ոչ թէ մեր ժողովուրդին հանդէպ ունեցած իր «քարեկամութեան», այլ իր սեփական, քաղաքական անմիջական շահերէն: Այսպէս ինչպէս կարելի է քաջատրել Կեդրոնական կառավարութեան «արդար» եւ «քարեկամական» կեցութեանը հանդէպ Գարաբաղի մեր ժողովուրդին: Ո՞ր մէկ «քարեկամութեան» չափանիշով քաջատրել Կեդրոնին կողմէ սխտեմատիկ կեր-

պով կազմակերպուած եւ «աղուոր դաս մը» տալու մտադրութեամբ յոյացուած Սուրբաշիթի, Բաբուի ոճիրները եւ յաջորդական դատական խնդկատակութիւնը: Հապա» տնտեսական եւ քաղաքական շրջափակումը, պատմական շոկատներու խնդր-ծախսները ընդդէմ ժողովուրդի մը, որուն աչքերէն չէ չորցած արցունքը՝ համայնակու երկրաշարժի գոհերուն եւ անհաման տառապանքը՝ անտուն-անպատուար քաղաքակրթութիւնը:

Հայաստանի հանրապետութիւնը բազմամայ քաղաքական, աշխարհագրական եւ տնտեսական հրամայականներէ թելադրուած, կը մնայ Ռուսաստանի աշխարհաքաղաքական շահերուն ծիրին մէջ, պիտի մընայ այդ ծիրէն ներս: Բայց, ի՞նչ պայմաններու տակ եւ ի՞նչպիսի կապերով: Ու՞ր կը սկսի ինքնիշխանութիւնը եւ ու՞ր կը վերջանայ ստրկութիւնը: Ներկայիս ժամանակավրէպ եւ անընդունելի է քաջարձակ կառավարութիւնը: Անգոյ եւ երազային է քաջարձակ անկախութիւնը:

Ներկա զեկավարութիւնը կը ձգտի առաւելագոյն չափով յամրաքայլ անդրդազնել

դրակառուցել պատասխաններ (կամ պէտք է պատասխանելին) 17 մարտի Միութեանական հանրաքուէին: Մենք պատճառներ ունենք ենթադրելու, որ ոչ միայն յարգելի պատմաբանը, այլ նաեւ բազմաթիւ սրտցաւ սփիւրջահայեր, հայրենասիրական զգացումները մեկնելով եւ մեր ժողովուրդի ապահովութեան մտահոգութիւններէն զգացուած, կը սահմանելին որ այսպէս ասած միութեանական համակարգը կանգուն պահելու քաղաքականութիւնը քաջալերուէր եւ, հետեւաբար, հանրաքուէին հայրենի մեր կառավարութիւնը մասնակցէր:

Կը մասնակցի թէ ոչ, կը յետագէ վեց ամիս, ըստ համամիութեանական սահմանադրութեան տրամադրութիւններուն, կը վերաքննէ եւ կը վերափոխէ հարցադրման եղանակը, յարմարեցնելով տեղական պահանջներուն եւ հրամայականներուն, այդ իրատեքը անընդարձակ կը պատկանի ժամանակավրէպ ընտրուած Հայաստանի կառավարութեան: Իսկ եթէ երբեք մեզի իրատեք տրուէր մեր համատե կարծիքը տալու, պիտի ըսէինք, ի հակադրութիւն յարգելի պատմաբանին, թէ քաղաքականու-

Բ Ա Ն Ա Վ Ե Ծ

Յակոբ Սարգիսեան

ԼՈՒԹԻՒՆԸ ՈՍԿԻ Է, ԽՕՍԻԼԸ՝ ԱՐՇԱԹ

իր «անկախութեան» գործընթացը՝ առանց կտրուելու Հայաստանը Ռուսաստանին կապող անհրաժեշտ քաղաք-տնտեսական պորտալարէն: Վերջինը կ'ենթադրէ շահեր ու զուգահեռ նոյնութիւն եւ ոչ թէ ստրկիկ եւ տիրոջ յարաբերութիւն: Ստրկամիտներ անպայման պաշտպանելի մը հովանիին տակ կ'ուզէն ապրիլ: Արկածախնդիրներ կ'ուզեն արագացնել իրենց անջատողական մեքենայութիւնները: Հայաստանի ներկայ զեկավարութիւնը շնորհիւ սահմանադրական (համամիութեանական) օրէնքին ընծայած հնարաւորութիւններուն, ուղղակի եւ անուղղակի քանակութեանց սկսած է Կեդրոնին հետ, բանակցութիւն մը՝ որ կը նպատակադրէ առաւելագոյն չափով անկախացնել իր ազգային գերիշխանութիւնը եւ ընդլայնել արտաքին յարաբերութիւնները: Այդ ինքնահաստատումին մէջ զգայի է վճռականութեան կորով եւ տեսիք:

«Ազատութեան հասած ըլլալու գիտակցութիւնը» կը պահանջէ անակնկալի չըրգալ, ինչպէս անցեալին, երբ «քարեկամ» երկիրը, այս կամ այն պատճառաւ կը քաշուի իր սահմաններէն ներս, ձգելով իր պաշտպանեալ երկիրը իր քախտին: Կը պահանջէ քործրացնել ազգային արժանապատուութիւնը իր ամէնէն ցած մակարդակէն՝ մուրացկանութեան ղեպի ինքնութիւն: Ըստ Դր Գուր իր «Պատերազմի հուշեր» հատորներէն մէկուն մէջ կը հաստատուէ, թէ «Եղեւնիութեանց դիմաց ինքզինքնին է որ կը դիմէ նկարագրի տէր մարդը: Իր շարժումները կը յատկանշուին իր անձնական կենցաղով, զանոնք կը սեփականացնէ, իրը կը դարձնէ»:

Պէտք է լքել այն քաղցրին մտածողութիւնը, թէ մենք տկար ենք եւ կարօտ ուրիշներու հովանաւորութեան: Մեր պատմութեան մէջ եղան դէպքեր, երբ առանձին մնացած բուն մը կ'ուղողներ, առանձին մընացած ըլլալու շնորհիւ, յաջողութեամբ կազմակերպուած են իրենց ինքնապաշտպանութիւնը:

Ազգ դառնալու համար պէտք է վճարել գերագոյնը գոհողութեանց: Ինչպիսի՞ գոհողութիւններու դուռ կրնայ բանալ ներկա Հայաստանի զեկավարութեան վարքագիծը, ո՞րքան կուզէ վճարել Հայաստանի մեր ժողովուրդը յանուն ինքնիշխանութեան, անկախ պէտք է գնահատուի նոյն այդ ժողովուրդին կողմէ:

Ձեռք գիտել, թէ սփիւրջն Հայաստան արտածումով ինչպիսի կարծիքներ կրնան օգտակար դառնալ մեր ժողովուրդին, քայքայ վստահաբար, խորացում եւ փոքր թելադրութիւններ փոփոխել կրնան քաղաքացիները բազմակողմանի ալընտրանքներու դէմ հանդիման գտնուող Հայաստանի զեկավարութեան գործը:

Գալով խնդրին հիմնական կէտին, յարգելի պատմաբանը կը թելադրէ, որ Հայաստանի հանրապետութեան զեկավարները

թեան մէջ չսխալելու համար պէտք է առաջ նայել եւ ոչ թէ ծո: Եթէ այս է իրողութիւնը միութեանական ներկայ իրաւիճակի, անկարելի է որ կանգուն մնայ առանց առանձին հանրապետութեանց գերիշխանութիւնը յարգելու, առանց քաջայայտելու, թէ ինչպիսի համամիութիւն է խնդրոյ առարկան: Արդեօ՞ք Կեդրոնին վերջին պահումը առանց պայմանագիրը հետամուտ չէ՞ քաղաքական առաւելութիւն մը կորզելու, փոխանակ իրական կառավարութեան մը ըլլալու քոլոր ստորագրողներուն հաւանութեան արժանացած: Արդեօ՞ք Կեդրոնը զոհ չի դառնար կեդրոնաձիգ ուժերուն, որոնք կ'ուզեն պահպանել ներկայ համակարգը, յանդիմանելու համար իրենց առանձնաշնորհումները: Պիտի կարենա՞ն պահպանել «Միութիւնը» առանց լուծարքի ենթարկելու միապետութիւնն ու անոր մնացուցները:

Բանակցութեան խողովակով Հայաստանի կառավարութեան կողմէ ի գործ դրուած նրբամիտ եւ ստեղծագործ քաղաքականութիւնը ամէնէն ընդունելի մտեցումն է ներկայ իրողութեան մէջ, նկատի առած սահմանափակ թիւով մեր քաղաքացիները, նկատի ունենալով նաեւ ապահովութեան եւ պաշտպանութեան մեր մտահոգութիւնները:

Ինչպիսի՞նք է Լեւոն Տէր-Պետրոսեանին իսկական դիրքորոշումը հանդէպ Միութեանական պայմանագրին:

«Չպէտք է անգամ քաջաբել, որ Հայաստանը ստիպուած լինի կենցաղ միութեանական պայմանագիրը, որքան էլ ստրկական թուայ այն» (Գերագոյն խորհրդի փետրուար 28-ի նիստի ելույթը):

Ի՞նչպիսի մտեցումով:

«Պարզ է որ գործի պէտք է դրունք բոլոր քաղաքական ազդակներն ու դիտնազիտական հմտութիւնները, առանկազոյն նպատակաւոր պայմանները ձեռք բերելու նըպատակով» (նոյն ելույթին):

Ինչպիսի՞նք պայմաններու տակ:

«Անի վատթար վիճակից խուսափելու նպատակով»:

Ժիշդ հոս է որ «պատմաբաններ», չըսելու համար ստրկամիտներ, ու պետական մարդիկ կը տարբերին իրարմ: Անմիջական հաւանութիւն, շուտափոյթ համակերպութիւն, հապանալ որոշում, թէ հանգամանքներու եւ իրադրութեանց ճիշդ գնահատում, ճիշդ ընթացում եւ ճիշդ վարքագիծ՝ «անի վատթար վիճակից խուսափելու նպատակով»:

Տեղին է հիշեցնել քաղաքական ուստաններու մէջ քաղաքական պատմագէտ կամ այսպէս հմուտ յօդուածագիրներուն, որոնք իրենց հեղինակարող կարծիքն ու արժէքի դատողութիւնը ունին այս կամ այն հարցի վերաբերեալ, թէ, անի լաւ է չգրել, չխօսիլ, չարտայայտուիլ, քան խօսիլ այսպէս:

Ահա թէ ինչու՞ միմիայն համակարծիք կրնան ըլլալ դոկտոր Պէլլերեանին հետ, թէ... «լուսինը ոսկի է, խօսիլը՝ արծաթ»:

ԱՐՄԵՆԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Վանի ինքնապաշտպանական զույգ հերոսամարտերի կազմակերպիչն ու ոգեշնչողը

Այս օրերին, երբ հայությունը մղում է ինքնապաշտպանական հերոսական կռիվներ, Արմենական կուսակցության հիմնադրման 106-ամյակի նշումը մայր հողում ավելի քան խորհրդանշական է:

Մայր հողում ծնված հայ անդրանիկ կուսակցության ինքնապաշտպանական փորձը, մանավանդ այսօր, արժանի է մեր ուշադրությանը: 106 տարի առաջ արմենականները առաջ էին քաշում ինքնապաշտպանությունը լուս ու մուշ, իրատես ու իրապաշտ, առանց ավելորդ ցուցադրականության կազմակերպելու գաղափարը:

Կարիք կա՝ կրկնելու, որ այսօր էլ նույնն է պանդխտական մեղադրանքը: Իսկ արմենականների ճշմարտացիությունն ու հաշտությունը դրսևտրվեց հայ ազատագրական պայքարի երկու փայլուն դրվագներում՝ Վանի 1896-ի ու 1915-ի հետապնդումներում:

Արմենականների ազատագրական մարտի ու գործի ժառանգորդ Ռամկավար ազատական կուսակցությունն այսօր նախադասությամբ է նշում 106-ամյակը այդ կուսակցության, որի գաղափարական անբողջ հասակագրով հարստացել է ՌԱԿ-ի տեսությունն ու գործունեությունը:

Արմենական կազմակերպությունը 19-րդ դարում ծնունդ առած առաջին հայկական քաղաքական կուսակցությունն է, որ ծրագրում էր «հեղափոխությանը ազատագրել Արևմտահայաստանը»:

Խրիմյան Հայրիկի և Մկրտիչ Փորթուգալյանի ազատատենչ ոգով սնված վանեցի մի խումբ երիտասարդներ, բոլորն էլ Փորթուգալյանի կենտրոնական վարժարանի շրջանավարտ՝ իրենց ուսուցչի արտոնվելուց հետո, 1885 թ. աշնանը, Մկրտիչ Թերլեմեզյան-Ավետիսյանի գլխավորությամբ հիմնում են հայ անդրանիկ կուսակցությունը, որ հետագայում ճանաչվում է Արմենական կազմակերպություն անունով, Մարտիկան Փորթուգալյանի նրատարակած «Արմենիա» թերթի անունով:

Հիմնադիր ժողովում ներկա էին Փորթուգալյանի աշակերտներ Մկրտիչ Ավետիսյանը, եղբայրը՝ Գրիգորիս Թերլեմեզյանը, Ռուբեն Շատիրյանը (հետագայում Վանի կուսակցության գեներալը), Գրիգոր Օտայանը (դաստիարակ և դպրոցի տնօրեն), Գրիգոր Աճնյանը (Գուրգեն Մանարու հայրը), Մաքնու Բարսեղյանը, Անտոն Խանջյանը (Աղասի Խանջյանի հայրը), Գրիգոր Պետրիկյանը (Շիկաներ) և Գարեգին Մանուկյանը (Բաղդեջյան):

Կազմակերպության գաղափարն ըստազովոր ուրիշ երեք շրջանավարտներ՝ Գարեգին Նաթանյանը, Գալուստ Ասլանյանը և Եղիշ Կոնդակյանը, Վանից դուրս գտնվելով՝ քաղաքային էին ժողովից:

Հետագայում, հիմնադիր անդամներին են միանում Արմենակ եկարյանը (Վանի 1915 թ.-ի հերոսամարտի զինվորական պատասխանատու), Փանոս Թերլեմեզյանը

(հայտնի գեղանկարիչ), Հայրապետ Ծանկյանը (Մշո և Բիբլիսի մասնաճյուղերի հիմնադիր), Արմեն Շիտանյանը (վիպասան, Պլովդիվի մասնաճյուղի հիմնադիր), Միքայել Նաթանյանը, Արտակ Դարբինյանը, Հովհաննես Գուլոյանը, Մարինա Ջարուխյանը, Եղիսաբեթ Քոնդաբյանը և ուրիշներ:

Կուսակցության հիմնադիրները, բոլորն էլ համոզված գաղտնի և անհղույկ գործունեության անընթացության, սկզբնական շրջանում դեռևս չէին ճշտել կազմակերպության անվանումը, սակայն Վանի հայությունը, նկատի ունենալով, որ կազմակերպության անդամները ստանձնել էին նաև Փորթուգալյանի «Արմենիա» թերթի ցրուճը, նրանց կոչեց արմենիականներ, որտեղից և շարժումը հետագայում կոչվեց Արմենիական, այսպես՝ Արմենական կազմակերպություն:

Այն ուներ ուրույն ծրագիր և ընդհանուր ու մասնավոր կանոնագրեր, որոնք ծայրահեղ գաղտնապահությամբ, ձեռագիր վիճակում և սակավաթիվ օրինակներով պահվում էին կուսակցության հաստատապան մարմինների մոտ, ժողովների ընթացքում ընթերցվելով միայն կարիքի դեպքում:

Արմենականների մտավոր նպատակներից գլխավորն էր Արևմտահայաստանի հայության համար հեղափոխությամբ ձեռք բերել իրեն ազատորեն կառավարելու իրավունք, դավանելով, որ «ընկերային (սոցիալական), սոցիալիստական յնդափոխությունը մեր իրականության հետ կապ չունեցող հեռավոր գաղափարն է, որին պետք է ձգտենք ապագային... երբ սկսի

աշխատանքի և քափիթալի պայքարը մեր մէջ»: Արմենականների համոզումով իրենց մոտավոր նպատակը կարելի պիտի լինի իրագործել՝ 1) կենտրոնական ուղղությամբ իրար միացնելով նույն գաղափարին ծառայող բոլոր հայ հայրենասերներին՝ առանց դավանանքի խտրության, 2) արքունացնելով ու քարծրացնելով հայ ժողովրդի գիտակցությունը, 3) զինելով և ինքնապաշտպանության վարժեցնելով հայ ժողովուրդը պատրաստ պահել այն ընդհանուր ապստամբական շարժման, երբ արտաքին պայմանները նպաստավոր դառնան:

Եւ քանի որ արմենականներն այդ ընդհանուր շարժման համար վտանգավոր էին նկատում մասնակի ցույցերն ու անարկյունությունները, նրանք հիմնականում ուշադրություն դարձրին կրթական և զինվորական աշխատանքների վրա, ժամանակի ընթացքում մեծ քանակությամբ զենք կուտակելով և լավ կովոդներ պատրաստելով:


Որպես Հայաստանի հողի վրա և ժողովրդի ծոցից ծնած կուսակցություն, արմենականները, կարճ ժամանակահատվածի ընթացքում Վասպուրականում հիմնավորապես հաստատվելուց հետո, տարածվեցին Արևմտահայաստանի մյուս գավառները, հասնելով նաև մինչև Պարսկաստան, Կովկաս և Բուլղարիա: Վանի ու Շատախի ավելի քան 90 մարտական ջոկատների կողքին, հնագինտե ծնունդ առած Մալմաստի, Փայաջուկի, Ուրմիայի, Խույի, Թալիզի, Մուշի, Բաղեշի, Նիկոմիդիայի (Իզմիր), Պարտիզակի, Աղասյանի մասնաճյուղերն ու Կովկասի, Բուլղարիայի, Ամերիկայի ու Եգիպտոսի օժանդակ կոչվող մասնաճյուղերը, որոնք ընդհանրապես կատարում էին մատակարարի դեր: Մասնաճյուղերը քաղկացած էին գործող և քաջալերող անդամներից: Առաջինները ենթակա էին դառնում ծրագրի ու կանոնների տրամադրություններին, իսկ քաջալերող անդամները՝ համակիրներ էին և նյութապես օժանդակողներ:

Ճուրաքանչյուր մասնաճյուղի անդամները մաս էին կազմում 5-15 անդամներից քաղկացած խմբերի, որոնց ներկայացուցիչներին կազմում էր խմբապետական ժողովը, որի ներկայացուցիչներն էլ՝ մասնաժողովը, որ վարում էր տվյալ շրջանակի հեղափոխական գործը: Շրջանակների ներկայացուցիչներից էլ կազմված էր կուսակցության կենտրոնը: Ճուրաքանչյուր շրջանակ ուներ տեղական պայմաններին հարմարեցված ներքին կանոնագիր, որ չէր հակասում հիմնական ծրագրին, կանոնագրին:

ԱՐՄԵՆԱԿ ԵՎԱՐՅԱՆ (1870 Վան - 1925 Կանիթե)

...Հին օրերին մինչև այսօր, նույն կերտակը, նույն հրայրքն է որ կը խանդավառ խրաքանչյուր ճշմարտ հայը, ամեն տեղ մեր ժողովուրդին երջանկաբերուն ու բարգաւաճումը իր նախնիներուն արինեովը ռազուած սամաններուն մէջ: Ու ոչ մէկ ուժ, ոչ մէկ ատեն պիտի կրնայ անոր սիրտն պոկել հանել ատիկա:

Ա. Եկարյան



Ուարարկ կեղծանունով ավարառու թուրք ու ցուրդ քնակչության համար անխոցելի առասպելական համբավի տիրապետ շայն մարտիկը, որ պորավար Աղդախիկի հետ մեկ է ներկայանում իբրև մեր ազգային-ազատագրական պայքարի 20-րդ դարի ամենափայլուն աստղերից մեկը, իր

Արմենականների գաղափարատարածումը Վանում կատարվում էր խնդրատիպ թերթով ու թուցիկներով: Ու թեև կուսակցության ծրագրում նախատեսվում էր քաղաքային ու նյութապես օժանդակել «Արմենիա»-ին, այն համարվելով «կազմակերպության գաղափարի տարածման թերթ», այդուհանդերձ երբեք չդարձավ պաշտոնական խոսափող արմենականների:

Իր հիմնադրումից ընդամենը 10 տարի հետո, Արմենական կուսակցությունը ըստիպված եղավ դիմագրավելու պատմական մի ժանր փորձություն, որը ծանոթ է Մեծ դեպք անունով: 1895 թ.-ին Մուլթան Համդիի օրոք Արևմտահայաստանի շրջաններում ծայր առած կոտորածների ալիքը հասել էր Վան, 1896 հունիսի 3-ին, սպանելով քնաշենյ տեղի հայությունը: Արմենական ավելի քան 20 խմբեր, իրենց կողքին ունենալով հնչալյան ու դաշնակցական մարտիկներ, պատրաստ էին սակայն խափանելու հայաքիչ ծրագրերը: Ու սկսվում է Մկրտիչ Ավետիսյանի զուխավորած հերոսական հույսկապ ինքնապաշտպանությունը: Փրկվում է Վանի հայությունը ստույգ կոտորածից: Հայ քաջորդիներին վիճակված էր նեց ու դավադիր մահ Բարթոլոմեոսի դաշտում, երբ օտար խոստումներից խաթված նրանք հեռանում էին Պարսկահայք:

Արմենական շուրջ 800 մարտիկների նահատակման թեև վնասված կուսակցության ողնաշարը, քայքայ շնորհիվ Գրիգոր Պետրիկյանի, Արմենակ Եկարյանի, Եղիշ Կոնդակյանի, Գրիգոր Աճնյանի, Սեպուհի ու Հարություն Կաթալյանի ջանքերի՝ այն շուտով վերակազմակերպվեց ու մինչև իսկ ունեցավ իր երիտասարդաց միությունը՝ «Կայծ» խմբատիպ թերթով (խմբագիր՝ Վարդան Պապիկյան): Ի դեպ, նույն Արմենակ Եկարյանն էր, որ Արամի հանձնարարությամբ գլխավորում է Վանի 1915 թվի ինքնապաշտպանությունը:


Արմենականներն իբրև ինքնուրույն կազմակերպություն գործեցին մինչև 1908 թվականը, 1907 թվին Բուլղարիայում արմենականներն ու վերակազմված հրչալյանները Կարապետկցական միություն անվան տակ միաձուլվեցին և Գր. Պետրիկյանի, Միքայել Նաթանյանի ու այլոց ջանքերով Կահիրեում կյանքի կոչվեց Հայ Մահաճաղողական Ռամկավար կուսակցությունը, որը 1921-ին այն ուսանողների միակցումով վերածվեց Ռամկավար ազատական կուսակցության:

Ռեկտ. ՎԱԶԵ ՂԱԶԱՐՅԱՆ

ՄԿՐՏԻՉ ԱՎԵՏԻՍՅԱՆ (ԹԵՐԼԵՄԵԶՅԱՆ) (1864 - 1896, Վան)

Միայն գաղափարով մը ոգեւորուի չի բունը, այլ լրջօրն պէտք է ուսումնասիրել այն պայմանները, որոնցում հնարաւոր կը դառնայ այդ գաղափարին իրագործումը:

Մ. Ավետիսյան



Իրապաշտ ու խոհեմ քաղաքական մտածողությունն մարմնավորող այս անպուզական հեղափոխականը 1885 թվին, Փորթուգալյանի արտոնից հետո, շարունակում է նրա կրթական գործը՝ Նախ երիտասարդության համար հաստատելով պիսավարժության ու մարմնամարկության պահեր, ապա նաև քայքայելով կիրակնօրյա դպրոցներ: Արմենական կուսակցության գլխավոր

հիմնադիրը դառնալուց հետո, օսմանյան հետապնդումից խույս տալով, 1886-ին անցնում է Պարսկահայք ու Մալմաստի 12 հայաբնակ գյուղերում քայքայում վարժարաններ:

1888-ին, Պոլիս վերադարձի ճանապարհին, արտոնվում է լիբիական Տրիպոլի քաղաքը, քայքայ նրան հաջողվում է փախչել Մարսել, որտեղ աշխատակցում է «Արմենիա» թերթին և ապա շրջապայույց հետո երոպական մայրաքաղաքները, անցնում է Սմերիկա: Մ. Ավետիսյանն ամենուր շատում է հիմնել արմենական մասնաճյուղեր:

1893-ին թեմական տեսուչ է նշանակվում Մալմաստի, Խոյի, Ուրմիայի և Թավրիզի հայ դպրոցների: Նա ոչ միայն քարակարգում է այդ շրջանների համայնքային կյանքը, այլև այդ վայրերի արմենականներին հաղորդակցության մեջ դնում Երոպայի ու Կովկասի արմենականների հետ:

1895 թվին անցնում է Վան, ուժեղացնում Արմենական կուսակցությունը և իր ուշադրության գլխավոր առարկան դարձնում պիսկուտական ու պիսավարժությունը:

1896-ի հունիսին Ավետիսյանի գլխավորած ինքնապաշտպանության շնորհիվ թեև Վանի հայությունը փրկվում է քնաշենյունից, սակայն օտար հյուպատոսարանների միջամտությամբ գոյացած համաձայնության հիման վրա՝ երբ Ավետիսյանն ուղևորվում է Պարսկաստան, Բարթոլոմեոսի վանքի մոտ ցուրդ ու թուրք պիսյակների գոհն է դառնում իր 800-ի շափ մարտիկներով, նախընտրելով նրանց արյան միախառնել իր արյունը՝ հակառակ փախչելու հնարավորության:

Մ. Ավետիսյանը պակաս թերթերի մեջ ցրված հոդվածների կողքին՝ 1890-ին Մարսելում հեղինակել է նաև «Թուրքիոյ հայեր և նրանց դրայիներ» գրքույկը: □

ԵՐԵՒԱՆԵՐԻՆ «ԱՐԳԵԼՎԱԾ Է» ՄԵԾԱՆԱԼ

Արևելյան Երուսալի բնապահպանական մղձավանջը

Երկու տարեկան Դորոտան տիկնիկը կրծքին սնդած խաղող բնած էր: Շնկ մազերը դուրս էին բափվել հիվանդանոցային մանճակալի ճաղերից, դեմքն արտակարգ հանգիստ էր: Շնչում էր խողովակի զգնությունը: Երան երկու ամիս առաջ են վիրահատել: Անցյալ տարվա ընթացքում, շնչառական օրգանների լուրջ խանգարումների պատճառով փոքրիկին ութ անգամ հարավային Լեհաստանի Չորզով քաղաքում գտնվող հիվանդանոցն էին տեղափոխել: Վերջին անգամ բժիշկներն այնքան էին վախեցել, որ որոշել են անմիջապես շնչա-

բյուր: Բուդապեշտի ամենախիտ բնակեցված թաղամասում 2-3 տարեկան երեխաների արյան մեջ հայտնաբերված կապարի պարունակությունը հազիվ թե երաշխիք կարող է հանդիսանալ նրանց առողջ լինելուն: Ուկրաինայի որոշ շրջաններում դպրոցահասակ երեխաների միայն 20 տոկոսն է համարվում միանգամայն առողջ: Քսանինիզ տոկոսը ծնվում են բնածին արատներով: Այժմ միջավայրի մաքրության համար պայքարող մի շարք կազմակերպությունների համառ ջանքերի ճնշման տակ, նոր

Երեխաների համար պարզապես անկարելի է փախչել այդ մթնոլորտից: Նրանք ստիպված խաղում են մետաղադրամի կույտերի և բույս ժայթքող ծախսերի միջավայրում, եւ շատ հաճախ նրանց դեմքերն այնքան են սևանում, որքան հանրափորներին:

Երեխաները բուժվում են նույնիսկ նախքան ծնվելը: «Հողի կամեց մարմնում կուտակված բույսը բոլորովին նոր որակ է հաղորդում ընկերներին՝ սաղմի համար շատ քիչ բովանդակությունով այնտեղ», ասում է բժիշկ Իոննա Կաշիա-Կուտոբ: Վիժումները շատ սովորական երևույթ են դարձել: Չորզովում մանկական մահացության դեպքերը կազմում են հազարից 22-ը, այն դեպքում, երբ այն 17 է ամբողջ Լեհաստանում, իսկ Դվինիայում 6: Չորզովում կանանց 14 տոկոսը վաղաժամ է ծննդաբերում աշխարհի բերելով թեթև քաշ ունեցող բուլկազն երեխաներ, որոնք ենթակա են վարակվելու լուրջ հիվանդություններով: Արևելյան Երուսալայում ծնված երեխաներն իրենց հետագա ամեն ընթացքում ավելի են հակված ծեծք բերելու սակավարյունություն, ռախիտ, ինչպես նաև բրոնխիտ, բրոնխիտ, ինչպես նաև շնչառական հիվանդություններ, քան այլ վայրերում ծնված երեխաները: Մտավոր հետադարձությունը գնալով աճում է, եւ ուսուցիչները պնդում են, որ կապարի բուժարարումից երեխաներն ավելի ագրեսիվ են դառնում: Կատարված թժշկական ու-

սումնասիրություններն ասացուցում են, որ Սիլեզիայի ամենավարակված քաղաքներից մեկում՝ Չարբոնում չորս տարեկանների 47, վեց տարեկանների 61 եւ տասը տարեկանների 71 տոկոսը տառապում են լուրջ հիվանդություններով կամ էլ թերզարգացած են:

Հիվանդանոցներն անմիջապես վիճակում են, դրանք չափազանց վատ են հանդերձավորված, որպեսզի կարողանան հոգալ այս կարգի հիվանդների կարիքները: Չորզովում գործող հիվանդանոցի դիրկտորի խոսքերով՝ հիվանդանոցն շտապ կարգով կարիք ունի ներերակային միանգամայն սրակիչների եւ թթվածնի քարծիկների: Հիվանդանոցում կա ընդամենը մեկ հակազագ, եւ, խոնավության պակասության հետևանքով, բուժքույրերը քաջ սրբիչներ են փռում երեխաների անկողինների գլխամասերում, որպեսզի նպաստեն կանոնավորելու նրանց շնչառությունը: Հիվանդանոցը գտնվում է հակառակ կուտայնջուր պողպատածուլարանից ընդամենը մի քանի հարյուր մետր այն կողմ, եւ, բնականաբար, արտանետված թույնն ու փոշին քացասարար են անդրադառնում ապրիլից մինչև հունիսի ամառը: «Մա է մեր գլխավոր ողորդությունը», գանգատվում է բուժքույր Մարիա Շելեզը:

Այնուամենայնիվ, հույսի նշույներ կան: Հակառակ այն հակառակ պրոբլեմներին, որոնք առաջացել են Գերմանիայի վերամիավորումից, Գերմանիայի իշխանություններն այժմ փորձում են մինչև 2000 թվականը արևելյան մասի բնապահպանական նորմերի մակարդակի հասցնել արևմտաեվրոպական մակարդակի: Ըստ գործարանների կցանկված մոտիկ ապագայում: Չեխոսլովակիան արդեն սկսել է արդիականացնել իր պողպատածուլարան գործարանը եւ միջավայրի պահպանության նոր օրենքներ սահմանել, որոնք կհամապատասխանեն եվրոպական ընդունված նորմերին:

Լեհ պատասխանատու անճնավորություններ աշխատում են բնակարանների տաքացման համար օգտագործվող ամուլիք փոխարինել զազով: Նրանք արդեն փակել են մի քանի գործարան Սիլեզիայում, իսկ մյուսներին էլ ստիպում են «մաքրել» իրենց արտանետումները: «Նրանց վրա այնքան քարծր տուգանք է նշանակված, որ գործարանների ղեկավարները գտնում են, որ իրենց վրա տվելի էժան կնստի արդիականացնել ամբողջ տեխնոլոգիան, քան վճարել այն», ասում է Կատոլիցեի կառավարության մեջ էկոլոգիայի հարցերով գրադվող հանճահախմբի անդամներից Դանուտա Պիլետան:

Միջավայրի մաքրման այս գործընթացը, սակայն արդյունավետ չի կարող լինել, եթե չլուղեցվի այլ արժանատի փոփոխություններով:

ԷՆՐՈՅՈՒ ՆԱԳՈՐՍԿԻ
«Newsweek» Սպրիլի 8, 1991



Նկարում ծնվելի երկօգուկի արտանետը (տարեկան յուրաքանչյուր մարդու ընկող բաժինը՝ կիլոգրամներով) Արևելյան Գերմանիայում, Արևմտյան Գերմանիայում, Յրասիայում, ՍԵԺ Բրիտանիայում, Լեհաստանում, Չուգարիայում եւ Չեխոսլովակիայում, ըստ 1988 թվականի տվյալների:

փողախտման դիմել: Բժիշկ շնորհի կապակցին, որը քիթ-կոկորդի բաժնի վարիչն է, համոզված է, որ հենց այդ վիրահատությունը փրկեց աղջկան խնդդաման լինելուց: Նա նաև քաջատեղյակ է այն պատճառներին, որոնք ստիպում են բժիշկներին այդպիսի բարդ վիրահատման ենթարկել երկու տարեկան երեխաներին: «Դա մեզ մտ տիրող բնապահպանական աղետալի վիճակի հետևանքն է», ասում է նա:

Արևելյան Երուսալայում կոմունիստների բողած ամենասարսափելի ժառանգությունը բնապահպանականն է: Դորոտան միայն մեկն է այն տասնյակ դեպքերից, որոնք գրանցված են «սեւ եռանկյունի» կոչված շրջանում, այն իր մեջ ընդգրկում է հարավային Լեհաստանը, հյուսիսային Չեխոսլովակիան եւ նախկին ԳԴՀ-ի հարավային մասը:

Չափազանց զգայուն լինելով հիվանդությունների նկատմամբ՝ երեխաներն այժմ շատ թանկ են վճարում բնապահպանական կանոնների տարիներ շարունակ կատարված կոպիտ խախտումների համար: Աճել են ոչ միայն մահացությունը, այլ նաև վաղաժամ ծնունդներն ու թերզարգացածու-

կառավարություններն սկսել են որոշ դրական քայլեր ձեռնարկել:

Արևմտյան որոշ շրջաններ օգնում են մթնոլորտի մաքրման աշխատանքներին՝ գիտակցելով հարցի կարևորությունը:

Սակայն աղետի պատճառների կամ դրանց լուծման եղանակների վերաբերյալ մասնագետների կարծիքները միշտ չէ, որ համընկնում են: Որոշ արևմտյան գիտնականներ ամբողջ մեղքը բարդում են ինդուստրացման վրա, անկախ հասարակարգից՝ լինի այն կապիտալիստական, թե կոմունիստական: Մինչդեռ Արևելյան Երուսալայի մասնագետների կարծիքով կոմունիզմն է ամեն ինչի մեղավորը:

«Պատասխանը երեւի քաղաքականության մեջ է. ասում է Լալո Սուրջանը Հունգարիայի առողջապահության նախարարը՝ վկայակոչելով Երուսալայում հիվանդների կյանքի տեսողության փոփոխական պատկերը: - Մի քանի տասնամյակ առաջ ոչ կոմունիստական երկրներում, ինչպես օրինակ, Իսլանդիայում, հիվանդների մահացության տոկոսը ամենաբարձրն էր, իսկ 1980-ական թվականներից նրանց տեղը գրավեցին Արևելյան Երուսալայի երկրները

54 ՏԱՆԵՐՈՐԳ ՏՈՒՐ

«Արարատ» - «Ապարտակ» Վ. 2:0
Երեւան, մայիսի 6

ԱՐՄԵՆ ՍԱՐԳՍՅԱՆ («Արարատ»ի գլխավոր մարզիչ) - Խաղից դժգոհ լինելու հիմքեր չունեն: Ինձ ուրախացնում է, որ վերջին 3 հանդիպումներում տղաները կոլեկտիվ, կոմբինացիոն խաղ են ցուցադրում: Մակայն մտանդում է այն, որ 2 խաղ անընդմեջ չենք կարողանում նույն կազմով հանդես գալ. անընդհատ վնասվածքներ, նույնիսկ կոտրվածքներ: Ստիպված օգտագործում ենք անփորձ երիտասարդներին: Մայիսի 10-ին Մոսկվայի «Տորպեդո»ի հետ զավթի խաղարկության կիսանգրափակից հանդիպումն է, որին թե՛ մենք եւ թե տորպեդյանկանները խիստ մեծ նշանակություն ենք տալիս եւ նախադասարարում ենք ամենայն լրջությամբ, սակայն արդեն գիտենք, որ Պոդոս Գալստյանը, Արտակ Կարապետյանը, Արմեն Հակոբյանը եւ, հավանաբար, Կարեն Մարկոսյանը, որը ծանր վիրուսային հիվանդության պատճառով երկար ժամանակ զրկված էր նույնիսկ սնվելու հնարավորությունից, լինելու են հանդիսականների թվում: Միայն Արմեն Բարալայանն է վերականգնվել մարզում:

Երբ մոտեցա հյուրերի գլխավոր մարզիչ Նիկոլայ Խուդինին, վերջինս կտրականապես հրաժարվեց հարցազրույցից եւ տեսնելով հանդիպման գլխավոր մրցավար Կիրիլովին, նետվեց նրա կողմն ու բորբոքված չալոտեց: «Չկարծես, թե հեշտությամբ կեմարանք»:


Ինչի՞ց էր դժգոհ մարզիչը, այդպես էլ չհասկացա: Իսկ ի՞նչ անի «Արարատ»ը, որ հաճախ է բողբոջելու հիմքեր ունենում:

ՄԵՐ ՀԱՅԵՐԵՆԿԱԳՆԵՐԸ ԱՐՏԱՍԱՅԱՆՈՒՄ

ԺԻԼ ՀԱՄԲԱՐՉՈՒՄՅԱԼ

Մնվել է 1969-ի մայիսի 20-ին Մարտելում: Հասակը՝ 173 սմ, քաշը՝ 70 կգ:

Խաղում է Ֆրանսիայի ֆուտբոլային հանրահայտ ակումբներից մեկի՝ «Կանն»ի կազմում, որպես պաշտպան: Ժիլ Համբար-



Վերնում աջից՝ Ժիլ Համբարձումյանը Սիլեզիայի, Լոզնյայի եւ Ստոպրայի հետ:

ծույնանը հանդես է գալիս այնպիսի անվանի ֆուտբոլիստների հետ, ինչպիսիք են՝ Ստոպիրան, Միլանովիչը, Բելունեն:

«Կանն»ը հիմնադրվել է 1902-ին, իսկ պրոֆեսիոնալ թիմ է դարձել դեռևս 1932 թվականին եւ հենց այդ տարի էլ նվաճել Ֆրանսիայի գավաթը: Այնուհետեւ երկար տարիներ թիմը մասնակցել է 2-րդ դիվիզիոնի (առաջին լիգա) առաջնություններին: 1987 թվականին վերջապես իրականացավ

ՍԱՐՉԱԿԱՆ

այս քիմի երկրպագուների երազանքը. «Կանն»ը կրկին վերադարձավ ուժեղագույնների խումբ եւ հիմնովին ամրապնդվեց այնտեղ: Նախորդ 3 առաջնություններում թիմը գրավեց միջին տեղեր, իսկ հիմա առաջատարների թվում է:

«Կանն»ը այժմ Ֆրանսիայի առաջին դիվիզիոնի ամենահեռանկարային եւ ամենաներիսասարդ կազմ ունեցող թիմերից է, իսկ մեր հայրենակից 21-ամյա Ժիլ Համբարձումյանը՝ նրա առաջնորդի խաղացողներից մեկը:

Վերջինս «Կանն»ը էքս-ան-Պրովանսից հրավիրել է մեր հայրենակից եւս մեկ ֆուտբոլիստի՝ Պետրոսյանին, որ Ֆրանսիայի երիտասարդական հավաքականի անդամ է եւ խաղում է կիսապաշտպանական գծում:

3000 ՌՈՒՒԼԻ՝ ԱՐՅԱԻ ԾՈՂՈՒԹՅԱՆ ՖՈՒԳԻՆ

Տիգրան Պետրոսյանի անվան շախմատիստի կենտրոնական տանը տեղի ունեցավ Նարդու Դայաստանի գավաթի տեղափոխված խաղարկությունը:

Այս մարզածեղ, հատկապես կարճ տարբերակը, արդեն միջազգային գրանցում է ստացել:

Մրցապարտեղ էին դուրս եկել հանրապետության գրեթե բոլոր շրջանների 300-ից ավելի նարդիստներ: Կարճ եւ երկար ձեւերում, քայի բյուրեղապակյա գավաթներից եւ հուշանվերներից, նախատեսված էր 5000 ռ. մրցանակային ընդհանուր ֆոնդ: Երկու ձեւերից էլ ուժեղագույն քառյակ մտան միայն երեւանցիները: Կարճ ձեւից գավաթակիր դարձավ Վազգեն Սաթեղյանը, որն արժանացավ նաև 1500 ռ. դրամական պարգևի: Երկար ձեւից հա-

ջողությունն ուղեկցեց Վաղիմ Կալիանյանի: Նա ստացավ 1000 ռ. պարգև:

Մրցանակակիրներն իրենց հասույթից եւ Նարդու հախապետության ֆեդերացիան որոշեցին 1500-ական ռուբլի փոխանել Մրցաթի օգուության ֆոնդին:

ԿՈՐՈՇԵՆ ՎԵՐՉԻՆ ՓՆՉԱՅԻՆ ՄՐՅԱՆԱՐԵՐԸ

Մայիսի 9-ից 12-ը Երեւանում եւ Լեհի-Նեդրադում կայանալիք բասկետբոլի խՍՀՄ 2-րդ խմբի առաջնության 8 ուժեղագույն թիմերի վերջին փնջային երկու մրցաշարերը կորոշեն առաջին խմբի (նույն է նաև բարձրագույն խմբի, քանի որ գալիք առաջնության նախնական փուլն էլ անկապվելու է համառոտ) ուղեգրի տիրոջը եւ 2-րդ, 3-րդ մրցանակակիրներին, որոնք դեռ կշարունակեն պայքարը այդ իրավունքի համար:

Երեւանում, «Ռիեմոն» մարզադահլիճում, կմրցեն «Ուրարտու»-ն, Ալմա-Աթայի ԲՄՍ-2, Կրասնոյարսկի «Էքսպոն» եւ Միլվոդիի «Լոկոմոտիվ»:

Մայիսի 9,
 ժ. 16:30 «Լոկոմոտիվ»-«Էքսպոն»,
 ժ. 18:00 «Ուրարտու»-«ԲՄՍ-2»:
 Մայիսի 10,
 ժ. 16:30 «Լոկոմոտիվ»-«ԲՄՍ-2»,
 ժ. 18:00 «Ուրարտու»-«Էքսպոն»:
 Մայիսի 11,
 ժ. 16:30 «Լոկոմոտիվ»-«Էքսպոն»,
 ժ.18:00 «Ուրարտու»-«ԲՄՍ-2»:
 Մայիսի 12,
 ժ. 14:00 «Լոկոմոտիվ»-«ԲՄՍ-2»,
 ժ.16:00 «Ուրարտու»-«Էքսպոն»:

Բաժինը վարում է Ս. ԲԱԴՄԱՍՅԱՆԸ

ՀՈՒՆԱՍՏԱՆԻ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԻ ԿՈՂՄԻՅ ԳԱԳԱԿԱՆ ՅԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԾԱՆԱԶՄԱՆ ԱՌԹԻՎ

Ինչպես հաղորդել էին ապրիլի 24-ի մեր համարով, Հունաստանի խորհրդարանի 300 անդամների 162-ի ստորագրությամբ մի բանաձև էր պատրաստվել, որ ապրիլի 24-ին պիտի ներկայացվեր ՄԱԿ-ի Աթենքի գրասենյակի տնօրենին: Միաժամանակ, խորհրդարանական երեք զԵԼ-խավոր կուսակցությունների ներկայացուցիչներին կազմված մի խումբ հանձնաժողով ստանձնել էր Հայկական ցեղասպանությանը Հունաստանի խորհրդարանի կողմից պաշտոնապես ճանաչել տալու և մեր ժողովուրդի պայքարին ֆինանսել կանգնելու մի նախագիծ-օրինակով պատրաստվելու:

Այս կապակցությամբ, իբրև լրացում մեր այդ լրատվության, մի հատված ենք հրատարակում Հայկական ժողովրդական շարժման Աթենքի գրասենյակի «Ազգ»-ին հղված հաղորդագրությունը:

ՄԱՍԼՈՑ ԳԱՂՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

«24 ապրիլի առաջինը, Հ. Ժ. Շարժման ներկայացուցիչներ, ընկերակցություններ, ուսանողներ, զինվորականներ, այսօրվա յուրաքանչյուր խորհրդարան, հանդիպումներ և յուրաքանչյուր խորհրդարանի նախագահ պրն. Քանախի ծախարհին, որուն յայտնեցին պատմությանը և միայն ժողովուրդին նրախաղճիտությունը և շնորհա-

ՀՈՒՆԱՍՏԱՆԻ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԻ ՆԱԽԱԳԱՅՆ ԸՆԴՈՒՆՈՒՄ Ե ԳԱԳԱԿԱՆ ՊԱՏՎՈՒԹՅԱՆ ԾԱՆԱԶՄԱՆ ԱՌԹԻՎ

Հունական բերքերից «Athens News»-ը իր ապրիլի 25-ի համարում գրում է, որ Հունաստանի խորհրդարանի նախագահ Քանախի ծախարհին ապրիլի 24-ին ընդունել է հայկական պատվիրակությանը, որ հունական քաղաքական կուսակցությունների ներկայացուցիչներին ուղեկցությամբ նկատել էր շնորհակալություն հայտնելու խո-



Սրբ. Ոսկան Գալփաջյանը բանաձևը հանձնում է ՄԱԿ-ի Աթենքի ներկայացուցչին



Ոսկան Նալ. Գալփաջյանը շնորհակալություն է հայտնում պրն. Քանախի ծախարհին:

կալությունը յուրաքանչյուր խորհրդարանի կողմ նախաձեռնելու քայլին համար: Նոյն պահուն, հայկական ցեղասպանության ճանաչման համար կազմված միջ-խորհրդարանական յանձնաժողովի անդամները խորհրդարանի նախագահին պաշտօնապես կը յանձնեցին ցեղասպանությանը դատապարտման և ճանաչման նախագիծ բանաձևը, որ օրակարգի վրայ պիտի գայ յառաջիկայ օրերում: Անելի վերջ, հայկական պատվիրակությանը այցելեց նաև խորհրդարանի մեջ գործող կուսակցական կոորդինատիվները, որոնց անդամներում փոխանցեց մեր ժողովուրդի նրախաղճիտությանը զգացումները, որմ ետք հայկական ներկայացուցչությունը, ընկերակցությունները յուրաքանչյուր խորհրդարանը ներկայացնող պատմությանը մեր, քաղաքում ուղղունցան ճանաչման մաս ՄԱԿ-ի գրասենյակը, ուր գրասենյակի անդամները յանձնեցին յուրաքանչյուր խորհրդարանի 162 ներսփոխաններում ստորագրությունը կտող և ՄԱԿ-ին յղում թանաձևը:

Ճանաչման մասով յայնօրն անդրադարձան վերոնշյալ աշխատությանը և նախաձեռնությունը:

ՄԵՆՔ ՊԵՏՔ Ե ԳՈՐԾԵՆՔ ԲԱՂԱՔԱԿԱՆ ՄԵԹՈՂՆԵՐՈՎ ԽԱՍՈՒՄ ԵՎ ՎՊԱՏՎՈՒԹՅԱՆ ԿՈՄՊՈՆԵՆՏ ԵՆ ՆԱԽԱԳԱՅԻՆ

Երկվ լրագրող Հայկ Կարապետյանը եղավ Հայաստանի Հանրապետության նախարարների խորհրդին կից նորաստեղծ պաշտպանության կոմիտեում և գրուցեց կոմիտեի նախագահ Վահան Շիրխանյանի հետ:

Վ. Շիրխանյան. Վիճակը առավել կտրուկ սրվեց: Դա կապված է այն բանի հետ, որ խորհրդային բանակը իջեցրել է դեսանտային ստորաբաժաններ Ոսկանյար և Բարեկամական գյուղերի շրջանում: Նկատվել են դեսանտայինների կուսակազմներ՝ նաև մյուս սահմանամերձ շրջաններում: Դեսանտային զորամասերը վերջնազիր են ներկայացրել այնտեղ գտնվող շուկաներին, որոնք պաշտպանում են այդ շրջանները արդյունաբերական հարստացումներից: Միանգամից սանձ, որ հինգ այս ժամին խորհրդային բանակի զինված ուժերը գնդակոծում են Ոսկանյար գյուղը:

Ցավն այն է, որ ե՛ր նրանք, ե՛ւ մենք գիտենք, որ խորհրդային բանակին դիմադրել այսօր չենք կարող: Պարզապես դա անհնար է:

Հ. Կ. Պարոն Շիրխանյան, այս կտրուկ սրված իրավիճակում նորաստեղծ պաշտպանության կոմիտեի, որի նախագահն եք դուք, ի՞նչ որոշակի քայլեր է ձեռնարկում, որպեսզի անտեղի զանր յանձնահանգ:

Վ. Շիրխանյան. Ես չեմ կարող ասել, որ հիմա մենք մի քանի օրում կկարողանանք ստեղծել մի հզոր բանակ, որը կապահովի մեր ժողովրդի անվտանգու-

րորդարանի նախագահին և հունական կուսակցություններին՝ Հայկական ցեղասպանության ճանաչման գծով նրանց գործունեությանը առթիվ:

Հայկական պատվիրակությանը մաս են կազմել Հունաստանի հայոց առաջնորդ Ոսկան Նալ. Գալփաջյանն ու Հայկական ժողովրդական շարժման ներկայացուցիչները:

Մինչ այդ, ինչպես նախապես արդեն հաղորդել էինք, հունական խորհրդարանի զխավոր երեք կուսակցությունների պատգամավորները մի մեծ խումբ խորհրդարանին է հղել ապրիլի 24-ը Հունաստանում պաշտոնական հիշատակումի օր հայտարարելու մի օրինագիծ, որ կընճարվի շուտով:

թյունը, մենք նորից պետք է աշխատենք քաղաքական մեթոդներով: Մեր խնդիրն է, ապահովել անվտանգությունը, չտալ իզուր զոհեր և քաղաքական միջոցներով հասնել ինչ-որ արդյունքների կենտրոնի և Արդյունքների հետ: Գլխավորը կենտրոնն է:

Հ. Կ. Պարոն Շիրխանյան, շարք օրը մեծ թվով խորհրդային դեսանտ է իջեցվել նաև Երևանում: Այսօրվա դեպքերի զարգացումը, արդյոք, չի՞ նշանակում, որ սա նա ընդհանուր շրջափակի մի օղակ է, որ վտանգ է սպառնում նաև Երևանին:

Վ. Շիրխանյան. Ես չեմ քաջառում, չեմ քաջառում հավանականությունը փոքր է:

Հ. Կ. Գուր տեղա՞նք եք, ի՞նչ միջոցներ է ձեռնարկում Հայաստանի կառավարությունը:

Վ. Շիրխանյան. Մենք լավ ծանոթ ենք Լիտվայի փորձին, Լիտվայում պետական հեղաշրջում կատարելու կենտրոնի փորձին: Իհարկե, կենտրոնը նույն մեթոդներով այստեղ չի գա, Հայաստանը Լիտվա չէ. նա դա շատ լավ է պատկերացնում:

Հ. Կ. Իսկ չի՞ քաջազուր, որ փորձեն նաև վերադառնալ այս նորաստեղծ պաշտպանության կառույցները:

Վ. Շիրխանյան. Նրանք սկզբից էլ շատ քաջասական դիրքորոշում ունենին: Նույնիսկ Գերագույն խորհրդի պաշտպանության հանձնաժողովին էին դնում: Իհարկե, կաշխատեն վերացնել:

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԱՐԶԱԳԱՆՔՆԵՐ

ԳՈՐԲԱՅՈՎԸ ԳԵՂԻՆԱԿԱԶՐԿՎՈՒՄ Ե ԱՐԵՄՈՒՏՔՈՒՄ

Գորբաշովը նորից դիմել է Արեւմուտքին, կոչ անելով սատար կանգնել իր պերճարտությանը: Նա պզուշայել է, որ եթե Ռեյզանի և Բուշի կառավարությունների հետ ստեղծված խճուղի-հարաբերությունները չըպահպանվեն, ապա կարող է սառը պատերազմի տր ալիք բարձրանալ: BBC-ի մեկնարակը անդրադառնալով Գորբաշովի ներկայիս կացությանը, գրում է.

«Վերջին մեկ-երկու տարում խճուղի-հարաբերությունների հեղինակության կտրուկ անկումն անմիջապես շտարածվեց Արեւմուտքում: Դեռ այն ժամանակ երա միջազգային վարկը պահպանվում էր:

Սեյալ տարվա զարեանը, առանց հաշվի առնելու ժողովրդի կամը, Գորբաշովն իր պրեզիդենտական ապարատին վերապահեց արտակարգ լիազորություններ, դրանով իսկ վերջին անգամ հարվածեց իր հեղինակությանը: Նույնիսկ խճուղի-հարաբերությունները պաշտպանել մեծ հեղինակություն վայելող արմատական ելքին, այնինչ Արեւմուտքը դեռ շարունակում էր փաստարենել Արեւելքի և Արեւմուտքի միջև սառը պատերազմի փոխարեն համագործակցության կուրս ընդունած Գորբաշովին: Բայց խճուղի-հարաբերության քայքայումը անսպասելի հրաժարականից, և բարեփոխումների դեմ ուղղված պահպանողականների ջանքերի մասին նրա ահպանագից հետո Արեւմուտքում սթափվեցին: Սեւշուտ, դա անպակասի ազդեցություն ունեցավ Արեւմուտքում: Սակայն արեւմտյան քաղաքագետները,

այդ թվում նաև Բուշը, չէին ցանկանում վերանայել իրենց հարաբերությունները, թե՛րեւս այն պատճառով, որ չգիտեին, թե ո՞վ է փոխարինելու Գորբաշովին: Նաև գիտակցում էին, որ լայնատարած խճուղի-հարաբերությունները հիմնադրաբար: Արեւմուտքում նաև կարծում էին, թե պահպանողականների դեմ կռուցիլի ստեղծումը միզուցեց անկախական քայլ է: Միայն վերջին ամիսներին Արեւմուտքում սկսեցին տարակուսել, թե արդյո՞ք Գորբաշովին պաշտպանելը միակ ճիշտ ուղին է: ԱՄՆ-ը գործնականորեն ապացույցել է, որ մտադիր է քննարկել խճուղի-հարաբերությունների հարցը: Գաղափարներն անկախական և Արեւմուտքի նշանակված Բուշ-Գորբաշովի հանդիպման ժամկետը դեռևս վերջնական չէ: Կան ապացույցներ, որ ՊԱԿ-ի պաշտպանության և ներքին գործերի նախարարությունների պահպանողականները նախկին համեմատ ալելի մեծ ազդեցություն են ձեռք բերում: Զինված ուժերի գործողությունները մերժաբայան հանրապետություններում և վերջերս նաև Հայաստանում մտահոգության առիթներ են տվել: Սակայն Արեւմուտքի մտահոգության հիմնական պատճառը Գորբաշովին հեղինակավոր փոխարինողի՝ Ելքինի ի հայտ գալն է:

Արեւմուտքի կարծիքով Ելքինը անկանխատեսելի և միզուցեց նաև պատերազմաշտ անձնավորություն է: Սակայն նրա հարաճուն հեղինակությունը նաև երկրի մյուս հանրապետություններում, պատճառ է դարձել, որ Արեւմուտքը մտածի նրա հետ համագործակցելու նպատակահարմարության մասին:

Գ. Ա.

ԻՆՉ ԵՆ ԳՐՈՒՄ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԹԵՐԹԵՐԸ

«Ինչպես հաղորդում է «Նեպալիստմայա զապետախ» թղթակից Այդին Մեթիսը, մայիսի 3-ին Մոսկվայի Արդրեշանի հանրապետության մշտական ներկայացուցչությունում տեղի է ունեցել մամլո ասուլիս, որի ընթացքում Արդրեշանի մշտական ներկայացուցիչ Մանաթ Ադաբեկ ներկայացրել է ԼՂԻՄ-ում և նրան հարող շրջաններում վերջին օրերի իրադրությունների ադրբեջանական կողմի մեկնարկները:

«ԼՂԻՄ-ում այժմ շատ վեճեց կա, հայտարարել է նա, - ԼԳԼ-ի վորքերը և խորհրդային բանակը արդեն սկսել են անօրինական զինված խմբերի զինաթափումը: Գտնվել են մեծ քանակությամբ ականանետներ, նռնականետներ, հրանետներ և զենայիրներ»: Ըստ Ադաբեկի, հայ մարտիկները կրակահերթ են բացել Թուրքի և Ղազախի շրջանների ադրբեջանական գյուղերի վրա: Մահացել է մեկ ադրբեջանցի, երկուսը վիրավորվել են:

Ինչպե՞ս են Ադրբեջանի ընդդիմադիր ուժերը վերաբերում ԼՂԻՄ-ի վերջին իրադրություններին: Այս հարցով «ԵԳ»-ի թղթակիցը դիմել է Ադրբեջանի ժողովրդական ճակատի վարչության անդամ, Ադրբեջանի Գերագույն խորհրդի պատգամավոր Թոֆիկ Գասիմովին:

Ժողովրդական ճակատի վարչությունը համարում է, որ Լեռնային Ղարաբաղում վաղուց պետք է հաստատել կարգ ու կանոն: Կա պրեզիդենտ Գորբաշովի հրամանագիրը անօրինական զինված խմբավորումների զինաթափման մասին: Այդ հրամանագիրն են այժմ կյանքի կոչում ԼԳԼ-ի և պաշտպանության նախարարության ուժերը: Ադրբեջանի ՕՍՈՆ-ը չի մասնակցում հայ զորախիսների զինաթափման գործողություններին: Սկզբում նախապատվություն ՕՍՈՆ-ը մասնակցում էր, բայց հետո հեռավորեց այդ գործողություններից: Այն, ինչ հիմա տեղի է ունենում ԼՂԻՄ-ում և Չայբեկում (Գետաշեն)՝ անձնագրային օբեկտի ստուգում է, որը Ադրբեջանի կողմից արդեն է:

Եւ պետք չէ աղմուկ բարձրացնել: Այդ աղմուկը օգտակար է նախեառաջ հայկական կողմին, որպեսզի Ադրբեջանի դեմ իր ագրեսիան ծածկի:

CNN Ամերիկյան ցանցը լայնորեն արձագանքում է

Քի.Քի.Սի, Մետեն-2, «Ապստոլյուն, «Ամերիկայի ծայն» և միջազգային այլ ռադիոհեռուստատեսային ցանցեր, որոնք այս օրերին, հետպետեց ալելի ինտենսիվ են արձագանքում, Գերտաշեն-Մարտունաշենում և Հայաստանի սահմանամերձ գոտիներում ծավալվող իրադրություններին: Ամերիկյան ամենատարածված հեռուստապանակը՝ CNN-ը, երկվ երկրյան մի շարքում 3-րդ անգամ տվեց ուղղակի հաղորդում Երևանից, մնացյալներից շատ ալելի անաչառ ձեռով:

Ուրբաթ, մայիսի 3-ին, ԳԲԸ Միության Վաշինգտոնի լրատվական գրասենյակի կարգադրությամբ և մեր երեսակի գրասենյակների արքայականի հեռախոսագծով առաջին անգամ ուղղակի եթեր տալուց հետո, մայիսի 5-ի երեկոյան, -ի հեռուստադիտողները կրկին անգամ իրենց կրկնենքին տեսան Ուրբեոտ Մավիսակալյանին, որ 4 րոպեում ներկայացրեց Գետաշեն-Մարտունաշենի և Հայաստանի հանրապետության նկատմամբ խորհրդային կառավարչի վորքերի քայքայող նախադրման գործողությունները, որոնք, սաայ, շարունակություն են Մուսկովի և Բազելի պորոմների, արդեն կենտրոնական իշխանությունների ձեռքով: Նա շտապալով իրել նաև գեներալ-գլոբալաբա Յուրի Շտալիկի տիրաառչակ հայտարարությունը՝ հայկական ատոմակայանի մասին, իբրև թափանցիկ օրինակ Կրեմլի հայտաղած քաղաքականության:

Մինչ այդ, նախորդ օրը, CNN-ը իր ամենամայա լուրերի ընթացքում կրկնել էր Գերագույն խորհրդի նախագահ Լ. Տեր-Պետրոսյանի նույն օրը կատարած հայտարարությունը:

Լուրերը՝ սեփ. թղթակիցների